

  
**ԱՏԱՄՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՁԵՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԲԵՆԻԱՄԻՆԻ  
ՀԻՆԱՎՈՒՐՑ ԴԱՄԲԱՐԱՆԱԳԱՇՏՈՒՄ**

**Ա. Յ. ԽՈՒԴԱՎԵՐԳՅԱՆ**

Մարդաբանական նյութերը հավաքված են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի (ղեկ. Ֆ. Տեր-Մարտիրոսով) և Գյումրի քաղաքի զավառագիտական թանգարանի աշխատակիցներ Ա. Խաչատրյանի և Լ. Եգանյանի կողմից Ա. Խուզավերգյանի մասնակցությամբ:

Բենիամինի դամբարանադաշտի պեղումները ի հայտ բերեցին գանգերի<sup>1</sup> և ատամնաշարերի մի շարք արհեստական ձևախախտումներ: Ատամների ձևախախտումների պատճառները կարող են լինել բնական հիվանդությունների հետևանքով, ինչպես նաև՝ արհեստական: Այդ ձևափոխումները տարբեր ժողովուրդների մեջ տարբեր են: Այդ են վկայում աշխարհի տարբեր երկրների մարդաբանների, ազգագրագետների և բժիշկների բազմաթիվ հետազոտությունները:

Magitot-ը<sup>2</sup> (1890) դասակարգում է ատամների արհեստական ձևափոխումների 6 հիմնական ձևեր՝ կրճատում, հանում, սղոցում, ծակած ատամներում կողմնակի նյութի տեղադրում (գլանաձև մետաղներ, թանկագին քարեր), ատամնաշապիկի ճեղքում-քանդում, արհեստական պրոզեստիզ (վերևի ատամնաշարի հեռացում):

Հիշենք նաև ատամներ ներկելու սովորույթը:

Եթե մարդիկ օգտագործում են տարբեր միջոցներ հիմնականում ատամների ճերմակության համար, ապա կան նաև ժողովուրդներ, որոնք ատամները ներկում են սև կամ կարմիր գույներով (Մալայան կղզիներ, Իբերիա, Կենտրոնական Ամերիկայի հնդկացիներ):

Արհեստական ատամներ տեղադրելու սովորույթը հնում տարածված է եղել եգիպտացիների, էտրուսկների, հռոմեացիների և հրեաների մեջ: Եգիպտացիները փոսած ու ծակած ատամները լցնում կամ փոխում էին, այդ նպատակով օգտագործելով փղոսկր կամ վայրի թզենու փայտ: Էտրուսկները արհեստական ատամների համար օգտագործում էին խոշոր գաղանների ատամները: Նման նմուշ ցուցադրվում է Տոսկանա քաղաքի Կամետո թանգարանում:

Դեռ 1901 թվականին ռուս մարդաբան Իվանովսկին<sup>3</sup> պնդում էր, թե որոշ ազգերի՝ ատամների արհեստական ձևափոխումների միջոցները այնքան բնորոշ և յուրատեսակ են, որ հանդիսանում են օժանդակ միջոց որոշելու համար գանգերի էթնիկական խմբի պատկանելությունը:

Ատամների արհեստական ձևափոխության սովորույթը տարածված է Հարավային Ամերիկայի, Օկեանիայի, Աֆրիկայի տեղաբնակների մոտ: Սեռական հասունության շրջանում, ամուսնության ժամանակ, զեղեցկության համար հեռացնում էին ժանիքները և կտրիչները, սգո նշան էր կտրիչների հեռացումը: Պաշտպանական, զգուշության նպատակով ստրուկների, գերիների և վարձկանների դիմացի ատամները սղոցում էին կամ վերացնում. դրանով տարբերում էին նրանց ազատ մարդկանցից:

Բենիամինի դամբարանադաշտի պեղումների ժամանակ 2 աղամարդու և 4 կանացի գանգերի վրա հայտնաբերվել են ատամների արհեստական ձևափոխումներ: Հատուկ ուշադրության է արժանի № 185 դամբարանում հայտնաբերված կնոջ վերին ատամնաշարի արտաքին արձանաձևի խիստ ամաշխուժությունը: Հավանական է, որ դիմացի ատամները սղոցված են: Վերին կտրիչների շրջանում նկատվում է երեք օստեոմելիտի (ոսկրածուծի բորբոքում) հրեալիթ քայքայված խոռոչով: № 217 դամբարանում հայտնաբերված աղամարդու ձախ կողային կտրիչի

<sup>1</sup> Տե՛ս Ա. Խուզավերգյան, Գանգատուփի արհեստական դեֆորմացիայի ազդեցությունը ուղեղի գանգատուփի և դիմային կմախքի շախների և հարաբերակցության վրա: Միջազգային պատմամշակութային ժառանգությունը. Ջեկուցումների թեզիսները, Գյումրիի, 1994:

<sup>2</sup> Տե՛ս Magitot, Contribution a l'histoire des mutilations dentaires. Longs. odont. de Geneve, 1890:

<sup>3</sup> Տե՛ս А. Ивановский, Зубы у различных медовеческих рас. Русск. Ант. журн. 1901, № 3—4:

արծնածածկի ընդգծված մաշվածություն կար (կտրիչի վերին աջ մասը խիստ սրածայր է), նկատվում է նաև ձախ ժանիքի ռեփոնցիա (ձևավորված արմատով ատամը ամուր նստած է ծնոտի խոռոչում և չի ճեղքվում): № 218 դամբարանում հայտնաբերված և ուսումնասիրված կմախքի վերին ծնոտի առջևի երեք կտրիչները հեռացված են (հնարավոր է, որ կիրառվել է ատամի ծիսական հեռացում), կամ էլ ոսկրածուծի թարախակալման արդյունք է (պարոզոստոզ): Իսկ պարոզոստոզը հազվադեպ է հանդիպում նույնիսկ ծերունական կմախքների գանգերում: Ձախ ժանիքի և կողային աջ կտրիչի շրջանում հայտնաբերված են ոսկրանյութի բորբոքման նշաններ: Մնացած գանգերի վրա ախտաբանական խախտումների ինչ-որ նշաններ չեն հայտնաբերվել, ներառյալ ատամների ձևախախտումները:

№ 17 և № 69 դամբարաններում հայտնաբերված կմախքների գանգերում ատամների արտաքին ձևերը և շափսերը անբնական են: Հնարավոր է, որ նշված ատամներին ամրացված են հղել արհեստական մարմիններ՝ ատամի շապիկի ձևով: Ատամի արմատների խոռոչները բաց են:

Արհեստականորեն ձևափոխված ատամներով գանգերը մարդաբանական տիպային ընդհանրություն չեն ցուցաբերում:

Բերրին, Մովսիսյանը<sup>4</sup> և այլոք ներքին և վերին ծնոտների անատոմիական շեղումները ծագումնաբանական հատկությունների կրողներ են համարում: Լեյմը<sup>5</sup> նշում է, որ Torus mandibularis ծայրաստիճան հազվադեպ է հանդիպում երեխաների կմախքների մեջ: Մենք հնարավորություն ունենք վավերացնել այն, քանզի Բենիամինի դամբարանադաշտում գտնված մանկական գանգերում այդ երևույթը փաստորեն բացակայում է: Այստեղ հայտնաբերված 18 կրմախքների գանգերում նկատվում է ծնոտների ներսի կողմի արտահայտված հաստացում: Ռոխլինը<sup>6</sup> նշված հաստացումը դիտում է որպես հետասերման (ատավիտական) հատկանիշ: Նյութի ուսումնասիրությունը հայտաբերել է այդ հաստացումների ընթացքում առաջացած ախտաբանական (պթոլոգիկ) փոփոխություններ:

№ 46 դամբարանից հանած գանգում նկատվում է հաստացում՝ վերին աջ կողմի I սեղանատամի ու ձախ կողմի II և III սեղանատամների շրջաններում, ինչպես նաև ատամի ոսկրափոսում:

№ 5 դամբարանում նկատվում է ոսկրածածկի բորբոքում ձախ կողմի II և III սեղանատամների ատամնածածկի տակ:

10 կմախքների վերին ծնոտի ներքնամասում նկատվում է ոսկրածուծի ուռուցքանման հաստացում: Հաստացած ոսկրածուծը արտաքինից պատված է բարակ շրջափակող շերտով, որի տակ գտնվում է ոսկրածուծը:

Տասնմեկի մոտ կարծր հիմքի շրջանում դիտվում է ոսկրածուծի հաստացում: Դրանք ազլիի հաճախ հանդիպում են մեզոլիտի և նեոլիտի ժամանակաշրջանին պատկանող գանգերի ծնոտների վրա<sup>7</sup>:

Պետք է ենթադրել, որ նախամարդու ատամների գործունեության շրջանակը բազմազան է հղել, և ծնոտների վրա ընկնող հաստացումները մեծ ծանրաբեռնվածությանը հարմարվելու արդյունք են:

Բենիամինի պեղումների արդյունքների մանրազնին ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հայտաբերել համահարաբերակցություն ոսկրածածկ հաստացման և ատամների ձևախախտման միջև: Զևախախտված ատամներ ունեցող շորս անձանց մոտ առկա է ոսկրածուծի հաստացում վերին և ներքին ծնոտներում: Ըստ մեր տվյալների, այդ հաստացումները կարող են լինել գլանաձև կամ կոնաձև:

Մեր այս ուսումնասիրության արդյունքները առաջադրում են նոր պորբլեմատիկ հարցադրումները, քանզի մինչև օրս հեղամարդաբանական ուսումնասիրությունները նման նյութեր չեն արձանագրել:

Ծիս փորձներ խոր անցյալում ապրող մարդուն մեր ժամանակի շափանիչներով բնութագ-

<sup>4</sup> Տե՛ս A. Berry, R. Berry, Epigenetic variation in the human Cranium.—J. of Anat., 1967, vol. 101, № 2; A. Мовсесян, Н. Мамонова, Ю. Рычқов, Программа и методика исследования аномалий черепа.—«Вопросы антропологии». Вып. 51, 1975:

<sup>5</sup> Տե՛ս E. Laine, Torus mandibularis. An. Journ. of Roentgen, Radium. Ther. and Nucl. Med., 91, 5, 1964:

<sup>6</sup> Տե՛ս Д. Рохлин, Болезни древних людей. М., 1965:

<sup>7</sup> Տե՛ս В. Якимов, Антропологические материалы из неолитического могильника на Южном Оленьем острове.—Сб. Музея антропологии и этнографии АН СССР. Т. XIX, М.—Л., 1960, В. Алексеев, Палеоантропология земного шара. Палеолит. М.,

գրել, ապա հնարավոր են նաև սխալներ: Ինչևէ, այդ համատարբերակցությունը իրական է և ոչ, ցույց կտան հետագա հետազոտությունները:

Խաղաղօվկիանոսյան կղզիների տեղաբնիկները, կաշեփոկները առավել առաձգական դարձնելու նպատակով, հումքը երկար ժամանակ ծամում էին: Դրա հետևանքով ժանիքները և կրտրիչները համեմատաբար շատ են մաշվում, առաջանում է աստիճանաձև ատամնակտրվածք:

Միջիգանի համալսարանի դոկտոր էլ Ռայնը էլեկտրոնային մանրադիտակով ատամների մանրազնին ուսումնասիրություններ է կատարել: Նման մանրադիտակով լուսային ճառագայթները փոխարինված են էլեկտրոնների փնջով, որը հնարավորություն է տալիս ամենափոքր քերծվածքը դիտել որպես խոր ակոս: Ռայնը համեմատել է Հյուսիսային Ամերիկայի դամբարաններում հայտնաբերված հնդկացու ատամները ժամանակակից էսկիմոսի ատամների հետ: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ երկուսի համար էլ ատամները ծառայել են որպես աշխատանքային գործիք<sup>6</sup>:

Քենեդիի պեղումները իրականացնող անձնակազմի հնագիտական, մարդաբանական, մշակութաֆառագիտական հետազոտությունները թույլ են տալիս հավաստել, որ № 185 և № 217 դամբարաններում հայտնաբերված ձեպխախտված ատամներ ունեցողները տվյալ հասարակության լիիրավ անդամներ չեն եղել: (Ծավոք սրտի, այդ հետազոտությունները ավարտու՞ն չեն, և 2 կմախքների գանգերի հիման վրա շնք կարող ներկայացնել տվյալ հասարակության ընդհանուր պատկերը):

Կիրառվել է արդյոք ատամների ձեպփոխումը որպես ծխական սովորույթ, թե՞ պարզապես դրանք օգտագործվել են որպես աշխատանքային գործիք, այս հարցերին ճշգրիտ պատասխանելու համար անհրաժեշտ են հարակից գիտությունների լայն շրջանի մասնագետների՝ ազգագրագետների, հնագետների նոր հետազոտություններ:

Ատամների արհեստական ձեպփոխությունների ուսումնասիրության նախնական արդյունքները թույլ են տալիս կզրակացնել.

1. Արհեստական ձեպխախտումներով ատամների գանգերը մարդաբանական տեսանկյունից միատարր չեն:
2. Ոսկրածուծի հաստատման և ատամների ձեպխախտման համահարաբերակցությունը ծնոտների վրա ընկնող մեծ ծանրաբեռնվածությանը հարմարվելու արդյունք է:
3. Ատամների արհեստական ձեպփոխումները կիրառվել են այն անձանց նկատմամբ, որոնց պետք էր տարբերել մյուսներից:

**А. Ю. ХУДАВЕРДЯН—Искусственно деформированные зубы из раскопок Бениаминского могильника.** — Изучение раскопанного материала позволяет автору предположить, что индивиды с деформированными зубами или не прошли инициацию и не были полностью признаны в обществе, или являлись участниками обрядового действия, или их зубы служили рабочим инструментом.

<sup>6</sup> *Sá» Ян Линдланд. Человек—ты, я и первозданный. М., 1991.*